

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՍՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՅՈՒՄ* (հարադրական բարդություններ)

Բանալի բառեր: Կրթական ծրագիր, կամընտրական դասընթաց, դասախոսություն, Ղարաբաղի բարբառ, բառակազմական համակարգ, էթնիկական ինքնավատահոլություն, ռազմավարական նշանակություն, հարադիր բարդություններ, զուգադրման մեթոդ:

Արցախի Հանրապետության ԱրՊՀ, Գրիգոր Նարեկացի և Մեսրոպ Մաշտոց համալսարաններում Բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի կրթական ծրագրերում ներառված է «Ղարաբաղի բարբառ» առարկան՝ որպես կամընտրական դասընթաց: Սույն հոդվածը կարող է ծառայել որպես դասախոսություն այդ դասընթացի և, առհասարակ, բարբառագիտական դասընթացների համար:

Սովորողների կողմից նյութի ընկալումը արդյունավետ դարձնելու նպատակով փորձենք այն ներկայացնել՝ պահպանելով դասախոսության կառուցվածքային բաղադրիչները, առանձնացնելով կարևոր հարցադրումներն ու հասկացությունները:

Դասախոսության նպատակը: Սույն դասախոսության նպատակն է սովորողներին յուրացնել տալ Ղարաբաղի բարբառի բառակազմական համակարգը, բառակազմական գործուն կաղապարները, կրկնավոր, բաղիյուսական բարդությունների ու հարադիր բայերի կառուցվածքային առանձնահատկությունները:

Թեմայի կարևորությունը: Առհասարակ բարբառների ուսուցումը մեծապես նպաստում է ոչ միայն տվյալ լեզվի պատմության, այլև լեզուն կրող ժողովրդի պատմության, ազգագրության ու մշակութաբանության համակողմանի ուսուցմանը: Բարբառների ուսուցումը նպաստում է նաև սերունդների մեջ ազգային դիմագծի պահպանմանը, որովհետև բարբառը «էթնիկական ինքնապաշտպանական կարևորագույն միջոցներից»(1) է: Այս առումով արդի իրականության մեջ Ղարաբաղի բարբառի ուսուցումը ունի նաև ռազմավարական նշանակություն: «Այսօր, երբ փաստացի անկախ ու տարածքային առանձին միավոր է Արցախի Հանրապետությունը, երբ այդ վարչատարածքային միավորը դեռևս աշխարհի կողմից ճանաչված չէ, և նույնիսկ որոշ քոչվորականներ հանդգնում են տեղի բնակչության ծագումնաբանական պատկանելության և բնիկության հարցը վիճարկել, բարբառի ուսումնասիրության, նրա գործածության շրջանակների ընդ-

*Հոդվածն ընդունվել է 10.04.2018թ.:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Գրիգոր Նարեկացի համալսարանի լեզուների ամբիոնը:

լայնման և տեղի ուսումնական հաստատություններում նրա ուսումնասիրության պահանջը դառնում է օրախնդիր»։ (2)

Ներկայացվող նյութի առավելություններն ու անհրաժեշտությունը: Ղարաբաղի բարբառի հարուստ ու ճկուն բառակազմական համակարգի մասին սույն դասախոսությունը սովորողներին կբերի այն համոզման, որ Ղարաբաղի բարբառը հայ բարբառների մեջ ոչ միայն ամենամեծ, այլև ամենակենսունակ և ամենահին բարբառներից է, քանի որ լեզուն և դրա տարբերակային ձևերը հարուստ ու կենսունակ են և կատարելագործվում են առավելապես այն դեպքում, երբ գործառնապես ակտիվ է բառապաշարի զարգացման ներլեզվական գործոնը՝ բառակազմական համակարգը:

Բացի դրանից բարբառի բառակազմական համակարգում բավականին ակտիվ են հնդեվրոպական նախալեզվից ժառանգված բազմաթիվ ձևույթներ, որոնք վկայված չեն գրական հայերենում: Դա ևս մեկ անգամ փաստում է, որ Արցախի տարածքը վաղնջական շրջանից հայկական է: Եվ Ղարաբաղի բարբառի ու նրա բառակազմական համակարգի ուսուցումը սովորողների մեջ կամրագրի էթնիկական ինքնավստահությունը: Եվ, ըստ իս, այսօր կարևոր է Ղարաբաղի բարբառի ուսուցումը ոչ միայն ԱՅ, այլև ՀՀ ուսումնական հաստատություններում:

Դասախոսության ենթադրվող կառուցվածքը: Դասախոսությունը ներկայացնենք 3 հիմնական բաղադրիչներով՝ **կրկնավոր բարդություններ, բաղիյուսական բարդություններ, հարադիր բայեր:**

Թեմայի հիմնական մասը ներկայացնելուց առաջ նպատակահարմար է առանձնացնել կարևոր հասկացություններ ու եզրույթները /**ձևույթ, հարադիր բարդություն, բաղիյուսական բարդություն, կրկնավոր բարդություն, հարադիր բայեր**/ և վերհիշել դրանց սահմանումներն ու առանձնահատկությունները:

Ներկայացվող նյութի պատմությունը: Ներկայացվող նյութը մասամբ ծանոթ է ուսանողների, որովհետև գրական հայերենի բառակազմական կաղապարները կենսունակ են մաս Ղարաբաղի բարբառում: Ուստի՝ Ղարաբաղի բարբառի բառակազմության ուսուցումը նպատակահարմար է կատարել գրական հայերենի մույն համակարգի հետ զուգադրելու միջոցով՝ օգտվելով ուսանողների՝ գրական հայերենի բառակազմական համակարգի մասին ունեցած գիտելիքներից: Արդյունավետ կլինի նախ հարցադրումների միջոցով վերհիշել գրական հայերենի բառակազմության օրինաչափությունները, բաղադրյալ բառերի տեսակները, բարդությունների և ածանցավոր բառերի բառակազմական կաղապարները, այնուհետև դրանք ցույց տալ բարբառում: Այդպես կապահովվի մաս սովորողների ընդգրկումը ուսուցման գործընթացին. որովհետև հաջողված և արդյունավետ դասախոսության գրավականը դասարանի հետ կայուն հաղորդակցումն է և քաջատեղյակությունը տվյալ ոլորտին:

Հիմնական մաս

Ղարաբաղի բարբառում ևս բառակազմական միջոցներն են բառաբարդումը և ածանցումը: Այստեղ ևս բարդությունները լինում են համադրական և հարադրական: Իբրև բառակազմական եղանակ՝ հարադրությունները մեծ ու կարևոր դեր են կատարում ոչ միայն գրական լեզվի, այլև բարբառի բառապաշարի հարստացման գործում: Բարբառում անվանական հարադրությունները իրենց քանակով զիջում են բայական հարադրություններին, սակայն դրանք դրսևորում են բարբառի բառակազմական համակարգի մեծ հնարավորությունները: Ղարաբաղի բարբառում տարածված են անվանական հարադրությունների կրկնավոր և բաղիյու-

սական տեսակները: Կրկնավոր բարդությունների կազմությունը բառակազմության ամենահին եղանակներից է, թերևս ամենանախնականը, սակայն, այսօր էլ բավականին կենսունակ է թե՛ գրական լեզվում, թե՛ բարբառներում: Կարծիք կա, որ նախախորհրդային շրջանում, ինչպես և խորհրդային շրջանի առաջին տասնամյակներում, կրկնավոր հարադրություններն առավել գործածական էին բարբառներում և գեղարվեստական լեզվում գործածվում էին վերջինիս ժողովրդախոսակցական երանգ հաղորդելու համար: Ձարգացման այդ ընթացքը լեզվաբանության պատմության մեջ նկարագրվում է այսպես. «Կրկնավոր հարադրությունների գործածությունը խիստ կենսունակացել է հայերենի զարգացման հատկապես վերջին տասնամյակներում և բնորոշ է արդեն հայերենի ոչ միայն ժողովրդախոսակցական, այլև գրական ու գեղարվեստական լեզվին»:(3)

Ա. Պապոյանը գտնում է, որ բառաբարդման այս եղանակը առավել չափով գործուն է ժողովրդախոսակցական լեզվում և մասնավորապես բարբառներում և «Քանի որ կրկնավորները առավելապես հատուկ են բանավոր խոսակցական լեզվին, ուստի նման բարդությանը դիմում են հատկապես այն գրողները, որոնք ամենից շատ են կապված ժողովրդական լեզվամտածողությանը, և որոնց համար լեզվի ժողովրդայնությունը ներքին ունակություն է և բխում է բանաստեղծական խառնվածքից»:(4)

Ուսանողը պիտի իմանա նաև, որ բարբառում ևս կրկնավոր բարդություններ կարող են կազմվել տարբեր խոսքի մասերից: Արդյունավետ կլինի ուսանողների մասնակցությամբ տարբեր խոսքի մասերից կազմել կրկնավոր բարդություններ՝ զուգադրելով դրանք գրական հայերենի նույնակազմ կառույցների հետ **սնք-սնք՝** (1.կույտերով, 2.մաքրասեր), **մը՛ծ-մը՛ծ** (մեծ-մեծ), **իրեք-իրեք՝** (երեքական), **ինքը-ինքը** (ինքն-իրեն), **կամանց-կամանց** (կամաց-կամաց) և այլն:

Այստեղ ևս կրկնավոր բարդությունները լինում են հնչյունափոխված (**թըյդի-թայդի** (հապշտապ), **թամուզ-թաք՞նուզ** (մաքուր, մաքրասեր), **ջենտլի-մենտլի** (ցուցամուլ) ևն) և **անհնչյունափոխ** (**լօշտրակ-լօշտրակ** (մեծ-մեծ), **լօպագ-լօպագ** (մեծամտաբար), **սիրի-սիրի** (խտրականություն) ևն):

Ղարաբաղի բարբառում կարելի է հանդիպել հնչյունական փոփոխությունների հետևյալ դրսևորումների.

1. Առաջին բաղադրիչի ձայնավորները կամ ձայնավորներից մեկը փոխվում են ը-ի, օրինակ՝ **թըքըն-թաքուն** (գաղտնաբար), **սըռըծ-սառած** /սառը, անտարբեր/, **ըըշինգ-ղաշանգ** /գեղեցիկ, գեղեցկաբար/, **յըվըշ-յավաշ** /կամաց-կամաց, դանդաղ/ ևն:

2. Առաջին ձայնավորը՝ ա, ի, ե, երկրորդ եզրում դառնում է ու: Օրինակ՝ **փալագ-փուլուլ** (1.լաթի կտորներ, 2.հին, քրքրված զգեստ), **քյանսիք-քյնսնիք** (աղքատ), **ծակ-ծուկ** /1.անցքեր, ճեղքեր, 2 թաքստոցներ/, **սնս-սնս** ձայն-ծպտուն/և այլն.

3. Բառասկզբի բաղաձայնը երկրորդ եզրում փոխվում է մ-ի (կամ ավելանում է մ), սակավ դեպքերում՝ ուրիշ բաղաձայնի, օրինակ՝ **փ-ի**, ինչպես՝ **ջենտելի-մենտելի** (ցուցամուլ), **պուճախ-մուճախ** (1.անկյուն, 2.վարագույրով առանձնացված մաս), **անգալու-մանգալու** (տեղը-տեղին, հանով-հոտով), **իլլանթ-միլլանթ** (մարդ արարած), **ըռ՛խ-մըռ՛խ** (անրգ.բերանը՝ իր շրջակայքով), **քիսի-փիսի** (ցածր ձայնով գաղտնի խոսակցություն) և այլն: Բառաբարդման այս եղանակը առավել չափով գործուն է ժողովրդախոսակցական լեզվում և մասնավորապես բարբառներում: Օրինակ՝ Ղարաբաղի բարբառում այս տիպի բարդություն կարող է կազմվել զանազան արմատներից՝ (**յէխտուտ** (կեղտոտ)-**մէխտուտ**, **հաց-մաց**): Ինչպես նշում է Ա. Պապոյանը՝ «Այդ եղանակով ամեն օր ու ժամ ամեն մարդ ուզածի չա-

փով կարող է կազմել նորանոր բառածներ, որոնք հաջող ու տեղին լինելու դեպքում կմտնեն շրջանառության մեջ կամ հակառակը՝ մեկ անգամ գործածվելով՝ այդպես էլ կմոռացվեն՝ առանց արժանանալու քաղաքական իրավունքի»:(5)

4. Առաջին եզրը ներկայացնում է մեկ վանկ, որի սկզբում բաղաձայնն ու հաջորդող ձայնավորը կրկնվող բառին են, իսկ երրորդը՝ **փ** կամ **պ**՝ **լափ-լավ** (շատ լավ), **սփփ-սըլ** (սև), **լօփ-լօլի** (երկարահասակ, նիհար), կամ կարող է մնալ անփոփոխ՝ **հնլ-հնլբնթ** (արագ, շտապ) ևն:

Բարբառային կրկնավոր բարդությունները մեծ մասամբ կազմվում են առանց կապակցական տարրի, հազվադեպ կարող են կապակցվել շաղկապով (**ծակ ու ծուկ**): Նմանաձայնական բառերից բաղադրված մի խումբ կրկնավոր բարդության բաղադրիչներ կապակցվում են **հա** մասնիկով՝ **քռռ հա քռռ, քահ հա քահ, դռռ հա դռռ, դրդիսկ հա դրդիսկ** և այլն: Դարաբաղի բարբառն «անընդհատ» իմաստով գործածվում է **հա** բառը (**հա** խոսում **ա**՝ անընդհատ խոսում է): Այս բաղադրություններում **հա**-ն բառակազմական դեր է կատարում՝ պահպանելով իր «անընդհատ» իմաստը:

Կրկնավոր հարադրությունները բարբառի բառապաշարի հարստացմանը նպաստում են նաև նրանով, որ, հարադրական բարդություն լինելով հանդերձ, իրենց հերթին հիմք են ծառայում նոր բաղադրությունների համար: Դրանցով հաճախ կազմվում են հարադիր բայեր, ինչպես՝ **օրկուն-օրկուն** (առատ, վարար) և **օրկուն-օրկուն անել** (վարար հոսել, թափվել), **փահ-փահ անել** (գոհունակություն արտահայտել), **կուփե-կուփե անել** (հրմշտել), **կըցան-կըցան անել** (զանազան կտորներ՝ հատվածներ իրար կցել):

Բաղիյուսական բարդությունները ևս ներկայանում են իմաստային ու կառուցվածքային բազմազանությամբ: Բաղիյուսական բարդությունների բաղադրիչները կարող են բաղադրված լինել կապակցական տարրով՝ և, ու շաղկապներով, և կարող են բաղադրվել առանց շաղկապի:

Բարբառային բաղիյուսական բարդությունների կազմության մեջ ակտիվ է ու շաղկապը: Գրաբարում և շաղկապը ավելի ակտիվ էր բառակազմության մեջ, քան ու շաղկապը, բայց «հայոց լեզվի զարգացման ընթացքում և շաղկապն աստիճանաբար կորցրել է իր բառակազմական ուժը, իսկ **ու**-ն, ընդհակառակը, հարադրությամբ բաղիյուսական բարդություններ կազմելու առավել մեծ հատկություն է ձեռք բերել, իսկ դրանում, անշուշտ, կարևոր դեր են խաղացել երկու հանգամանք. մեկ այն, որ **ու** շաղկապն ի սկզբանե հատուկ է եղել ժողովրդախոսակցական լեզվին և, բնականաբար, ժողովրդական բնույթի բարդություններ է կազմել, մեկ էլ այն, որ նույն այդ հիմքի վրա մա իմաստապես «հեռացել է» հոմանիշ և շաղկապից՝ արտահայտելով ավելի սերտ հարաբերություն՝ առնչակից բառերի միջև»:(6)

Ու-ով են կապակցվում նաև **քննջ** ու **պուճախ** (անկյուններ, ծայրեր), **քոռ ու փօշման** (փոշմանած), **բախչա ու բաղ** (դաշտ ու այգի), **լեն ու բօլ** (ընդարձակ, ազատ), **թուփն ու ծուպը** (ազգը), **թոռ ու թաց** (անծրևային), **տակ ու կլօխ** և այլ բարդություններ: Անշաղկապ բաղիյուսականների միջբաղադրիչային դադարը կարող է արտահայտվել միության գծիկով: Այսպիսի բարբառային կառույցներ են **չօր-չիթթ** (հագուստեղեն), **բօյ-բուսաթ** (հասակը, մարմնի կառուցվածքը), **զուռնա-դավալ** (երաժշտախումբ), **բօլ-հերիթ** (բավական), **սաղ-սալամաթ** (ողջ ու առողջ), **պակաս-պըռատ** (պակասություն), **հարայ-հրօց** (աղաղակ, կանչ), **յօրդան-դօշակ** (տեղաշոր), **կիւլ-կիճան** (զայլ-զազան), **նամուս-ղը՛յրաթ** (պատվախնդրություն), **պակաս-պըռատ** (կարիքավոր, աղքատ), **հընգէր-հըրէվան** (մտերիմներ, բարեկամներ), **չօր-չափար** (շատ նիհար) և այլն:

Բաղիյուսական բարդություններով բազմաբնույթ բառեր են միահյուսվում իրար, դրանք ցույց են տալիս տարբեր իրողությունների, երևույթների առնչությունն ու կապակցելիությունը: Բարբառում բաղիյուսական բարդության ձևավորման կենսունակ միջոց է տարբեր աղբյուրներից ծագած բաղադրիչներով կազմությունը: Առաջանում են հետևյալ կաղապարները.

ա. **Բնիկ եզր + փոխառյալ եզր**, ինչպես՝ **լեն ու բոլ** – ընդարձակ (գրբ. լայն+թուրք. bol-լայն, արձակ), **քարավ-բոլավ** (գրբ. քար-կարծր ապար+թուրք. kol-թուփ, մացառ)

բ. **փոխառյալ եզր + բնիկ եզր**, ինչպես՝ **բոլ-հերիք** – բավական (թուրք. bol-լայն, արձակ+գրբ. հերիք), **ալավ-կըրակ** – հուր, բոց (պրսկ., թուրք. alav-բոց+գրբ. կրակ):

գ. **Փոխառյալ եզր + փոխառյալ եզր**, ինչպես՝ **զուռնա-դավալ** (պրսկ. zurna, թուրք. zurne-արևելյան փողային գործիք+թուրք. kaval-սրինգ, թմբուկ), **քոռ ու փուլ** (պրսկ. kir-տեսողությունից զուրկ + պրսկ. puc. -մեջը դատարկ), **բոյ-բուսաթ** (թուրք. boy-հասակի բարձրություն, երկարություն + թուրք. busat-մարմնի կառուցվածքը), **բախչա ու բաղ** – պարտեզ, այգի (պրսկ. bagce-պարտեզ, բաղ + պրսկ. bag, թուրք. ba - խաղողի այգի), **յօրղան-դօշակ** (թուրք. yorgan-մեջը բուրդ, բամբակ լցված ծածկոց վերմակ + պրսկ. došak - ներքնակ) և այլն:

Առաջին և երկրորդ տարբերակների դեպքում ակնհայտ է, որ այդ բարդությունները բարբառի ստեղծած կառույցներ են, երրորդի դեպքում հնարավոր է դրանց՝ որպես պատրաստի կառույցների փոխառությունը:

Բաղիյուսական բարդությունները ևս կարող են հիմք դառնալ նոր բաղադրությունների կազմության համար (**բեղ-մօրութավոր, քոռ ու փուլ անէլ, ախ ու վիշ անէլ**,):

Բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում մեծ է հարադիր բայերի դերն ու կշիռը: Ռ. Իշխանյանը նշում է. «Հարադրական բայերը հայ ժողովրդական խոսքի ամենաբնորոշ բաղադրիչներն են»:(7)

Բարբառային հարադիր բայերի կազմության մեջ հատկապես ակտիվ են հետևյալ բայերը.

Անէլ - (**կիլիպիծո անէլ** (արագ և անհասկանալի խոսել), **պոօշ անէլ** (շրթունքները ծամածռելով լացակումել), **տնազ անէլ** (ծաղրել), **հանաթ անէլ** (կատակել), **թիմիշա անէլ** (դիտել), **դաչչանք անէլ** (աղաչել), **չնրնազ անէլ** (աղանդեր ուտել), **նաղլ անէլ** (պատմել), **քրնէնք անէլ** (խորհել), **վիւրիւրդ անէլ** (զննել, տնտղել) ևն), **կ'ալ** - (**մնմն կ'ալ** (հաջողվել, ստացվել), **հօփ կ'ալ** (փակվել, սեղմվել), **տոնս կ'ալ** դուրս գալ, (հեռանալ), **սազ կ'ալ** (սազել, պատշաճել), **պար կ'ալ** (պարել), **հախան կ'ալ** (պատժել), **մէխկը կ'ալ** (խղճալ) ևն), **ընգնէլ** - **վէր ընգնէլ** (ցած ընկնել), **յըր ընգնէլ** (մեկի հետ կատակներ անել), **շիլ ընգնէլ** (սխալվել, շփոթվել), **փօթ ընգնէլ** (ծալք գոյանալ), **պարաց ընգնէլ** (պառկել), **դիլխօր ընգնէլ** (տխրել, տրամադրությունն ընկնել), **կօլ'ալն ընգնէլ** (մեկի գիրկն ընկնել), **փօխս ընգնէլ** (մի բան սխալմամբ մյուսի տեղ ընդունվել), **թայդի ընգնէլ** (շտապել) ևն), **տալ** - **քացի տալ** (ոտքով հարվածել), **կըռ տալ** (ոտքը ուրիշի ոտքերի արանքը դնելով՝ կորացնելով՝ սայթաքեցնել), **մաննը տալ** (մատր կոկորդը խրելով՝ փսխում առաջացնել), **կօխ տալ** (կոխկրտել), **հծքաթ տալ** (հակառակվել), **լօթ տալ** (ցատկել), **բաղա տալ** (զոհաբերել), **թէյնը տալ** (թիկնել, կիսապառկել) ևն), **կէնալ** (**կօխ կէնալ** (ըմբշամարտել, պայքարել), **տապըռ կէնալ** (թաքնվել, լռել), **յէր կէնալ** (1.բարձրանալ 2.արթնանալ), **վը'նըռ կէնալ** (կանգնել), **հավան կէնալ** (հավանել), **անց կէնալ** (անցնել) ևն), **կըտրէլ** - դուռնա կըտրէլ (հիմարա-

նալ), խազնա կրտրէլ (հարստություն դիզել), ծարը կրտրէլ (միջոցները սպառվել) ևն), քաշիլ — թառանջ քաշիլ (հառաչել), վը՛ր քաշիլ (1. հանել, 2. մորթազերծ անել), ծէրք քաշիլ (հրաժարվել, ետ կանգնել), խօսկ քաշիլ (զաղտնիք դուրս կորզել) ևն), քի՛նիլ (յօլա քի՛նիլ (մի կերպ ապրել), փուստ քի՛նիլ (վրիպել), բա-դա քի՛նիլ (զոհաբերվել) ևն), ինիլ — ռադ ինիլ (հեռանալ), չօքավէր ինիլ (հովանի լինել), օյամիշ ինիլ, (սթափվել, զգաստանալ), յըխըթօղազ ինիլ (վիճել, լեզվակռիվ տալ), լաց ինիլ (լացել) ևն), օնէլ (յօր օնէլ (1. բարձրացնել, ձեռքն առնել), վըէր օնէլ (1. իջեցնել, 2. ծածկ սարքել, 3. քերթել), վըզավ օնէլ (1. հանձն առնել, 2. խոստովանել, 3. խոստանալ) ևն), ածէլ (չօռ ածէլ (պտտեցնել, ման ածել), պար ածէլ (1. պարել տալ, 2. չարչարել):

Դրանց անվանական բաղադրիչը կարող է լինել.

գոյական՝ (պար (պար) կ'ալ-քնել, զօռ (ուժ) տալ - ուժ գործադրել, **նշունց** (հիշոցք) տալ-անհիծել, **դաչանք** (աղաչանք) անել-աղաչել) **ածական՝** (չօրր տալ (ծառի չոր ճյուղերը հատել), շիլ (ծուղ, շեղ) քըցիլ-շփոթել, **հարամ** (պիղծ, ապականված) անել-պղծել), **կախյալ բայարմատ՝** (յօրթ (երթալ) ընգնել (ծիու դանդաղ և ցատկոտելով վազք), փաթ ընգնել (փաթաթվել), թօղ անել (արծակել)), **մակբայ՝** աշկար (ակներև) անել (բացահայտել), պըլուքիան անել (քերթել, քերծել), **ծայնարկություն՝** **հարայ** (օգնության կանչ) տալ (օգնություն կանչել), **հնիշտ** (խրտնեցնելու բացականչություն) անել (խրտնեցնել):

Այն, որ բարբառում բառակազմական կաղապարները կենսունակ են, փաստում են բնիկ և փոխառյալ եզրերով բաղադրված կառույցները.

Բնիկ եզրերով կենսունակ կառույցներ են հետևյալ բայերը. **լափու**(8) (հ.ե. laph - ալիք, հորձանք) **տալ** — հորձանք տալ, **հօփ** (9) (հ.ե. սb — սեղմել) **տալ** — 1. սեղմել, 2. նեղել, **տուզ** (10) (հ.ե. teu - բարեկամաբար ուշադրություն դարձնել) **տալ** — ակնապիշ նայել, **լօք** (11) (հ.ե. lok — ցատկ) **տալ** — ցատկել, **այօրտը** (հ.ե. bordo - գրբ. պորտ) **ընգնել** — ծանր աշխատանք կատարելուց պորտը տեղից խախտվել, **ծըպտուն** (12) (հ.ե. gep(h) — ծնոտ, բերան) **հանել** — թույլ ծայն հանել

Անվանական բաղադրիչը կարող է լինել փոխառություն արևելյան լեզուներից, ինչպես՝ **յան** (թյուրք. jan — կողք) **տալ** — շրջանցել, **յօլա** (թյուրք. yol — ճանապարհ) **գնալ** — 1. գոյատևել, 2. գոյատևել, **օյին** (թյուրք. oyun — խաղ, խաբեբայություն) **խաղալ** — մեկի գլխին փորձանք բերել, **քօքը** (թյուրք. kFk — արմատ) **կտրել** — արմատախիլ անել, **բօյ** (թյուրք. boy — հասակի բարձրություն) **քաշիլ** — 1. հասակը բարձրանալ, 2. աճել, **ճօթ** (թյուրք. jot, — 1. մաս, 2. գործվածք) **անել** — բաժանել, կիսել, **դուրբան** (արաբ., թյուրք. kurban-զոհ) **անել** — զոհաբերել, **շախ** (թյուրք. šax - ճյուղ) **անել** — փռել, տարածել, դօնաղ (թյուրք. konuk — հյուր) անել — հյուրասիրել, **լայըղ** (արաբ. պրսկ. layeg — վայել, արժանի) **անել** — արժանի համարել, **մազա** (պրսկ. maze — խմիչքի հետ գործածվող ուտելիք) **անել** — խմիչքի հետ ինչ-որ բան ուտել, **թիք'ան** (պրսկ. tike- կտոր. մաս) **անել** — քիչ ուտել, **դալաթ** (արաբ., պրսկ. — galat — սխալ) **անել** — անխոհեմ քայլ անել, **մարաղ** (պրսկ. marag — դարան, թաքստոց) **կենալ** — թաքնվել, դարան մտնել և այլն:

Քիչ չեն նաև այնպիսի անվանաբայական հարադրությունները, որոնց առաջին բաղադրիչը փոխառություն է ռուսերենից, ինչպես՝ **ռիսկ** (ռուս. риск—համարձակություն) **անել** — հանդգնել, **տէլէգրամ** (ռուս. телеграмма — հեռագրային հաղորդում) **տալ** — հեռագրով որևէ բան հաղորդել, **սյուրպրիզ** (ռուս. сюрприз — անակնկալ) **անել** — անակնկալ մատուցել, **զուբրիտ** (ռուս. зыбрум — անգիր անել) **անել** — սերտել, **նօս** (ռուս. нос — քիթ) **մնալ** — պարտվել, խեղճանալ, **մատերիալ** (ռուս. материал — շինանյութ) **տալ** — զրպարտել, **զակազ** (ռուս. заказ — որևէ բան արտադրելու հանձնարարություն) **տալ** — պատվիրել, **մաղաբիչ** (ռուս. магарабич — լավ գործի, ուրախ լուրի դիմաց տրվող նվեր) **անել** — լուրի դիմաց նվեր տալ և այլն:

Անվանաբայական հարադրությունների անվանական բաղադրիչները կարող են դրսևորվել նաև բարդություններով, ընդ որում՝ և՛ համադրական, և՛ հարադրական: Այս տիպի կառույցների կազմության մեջ հատկապես ակտիվ են կրկնավոր հարադիր բարդությունները, ինչպես՝ **ծնկի-ծնկի անէլ** (զաղտնի նայել), **դուզ-դուզ անէլ** (կռնալ), **տըպըկ-տապակ կալ** (տանջվել, տառապել), **դըրըն-դարան ինիլ** (հալածվել, քշվել), **ճաք-ճաք ինիլ** (1.ճաքճքել, 2.գոռոզամտել, 3.իր արդարացիությունը համոզելու համար ջանք թափել), **ճըկը-ճօկի անէլ** (խտրականություն դնել), **կգօ-մգօ անէլ** (ծգծգել), **փահ-փահ անէլ** (հաճույքի բացականչություններով գոհունակություն արտահայտել), **թէվ-թէվ անէլ** (շատ ուրախանալ), **լըխկիը-թըխկէ անէլ** (խախտու լինելուց շարժվել), **տաշի-տուշի անէլ** (ուրախություն արտահայտել), **խըխըլ-խախալ անէլ** (կնոջ՝ պչրելով քայլելը) և այլն:

Եթե հարադիր բայերի բայական բաղադրիչն է իր նշանակությունը մուծում հարադրավոր բայի ընդհանուր նշանակության մեջ, այսինքն՝ դրանց ընդհանուր նշանակությունը իր մեջ առնում է հարադիր կամ բայական բաղադրիչի բովանդակությունը, ապա դրանք յուրահատուկ իմաստային կամ անթարգմանելի դարձվածքի նշանակություն չեն արտահայտում և հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր չեն:

Հարադրավոր բայերի մի այլ խումբ առանձնահատուկ է նրանով, որ դրանց ընդհանուր նշանակությունը չի բխում բաղադրիչների նշանակությունների գումարից և այլաբերական կամ փոխաբերական բնույթ է կրում: Դրանք յուրահատուկ իմաստային նշանակություն են արտահայտում, հետևաբար դարձվածային հարադրավոր բայեր են:

Ա. Մարգարյանը դարձվածային հարադիր բայերը սահմանում է հետևյալ կերպ. «Դարձվածային են կոչվում այն հարադրավոր բայերը, որոնց հարադիր չն ու բայական բաղադրիչը միասին իմաստային առանձնահատուկ նշանակություն են արտահայտում և հանդես գալիս որպես մտքի արտահայտման պատկերավոր ձևեր»:(13)

Հարադիր բայերի զգալի մասը դարձվածային արժեք ունի: Սրանք արտահայտում են մեր ժողովրդի պատկերավոր մտածողությունը: Ժողովրդական մտածողության ծնունդ են **դու-դու կանչիլ** (միայնակ, անտեր մնալ), **փուստ քինիլ** (նպատակին չծառայել), **շօքավեր ինիլ** (հովանավորել, պաշտպանել), **պոռշ անէլ** (լացակումել, դժգոհության նշաններ ցույց տալ), **տիտիկ անէլ** (մնալ, հանգիստ նստել), **թերթէն տալ** (հանդուգն խոսել, շաղակրատել), **ծնկ անէլ** (զաղտագողի նայել) դարձվածային հարադրավոր բայերը:

Ուսումնասիրելով Դարաբաղի բարբառի բառակազմական համակարգը՝ սովորողները կհամոզվեն, որ բարբառն ունի հարուստ բառակազմական համակարգ և որ գրական հայերենի բառակազմության օրինաչափությունները գործում են նաև բարբառում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մարգարյան Լ., Դարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական և բուհական կրթահամակարգերում, Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն, Երևան, «Լինուշ» հրատ., 2011, էջ 526:

2. Մարգարյան Լ., Դարաբաղի բարբառի ուսուցման անհրաժեշտությունը Արցախի հանրակրթական և բուհական կրթահամակարգերում, Խաղաղ Կովկասը՝

տարածաշրջանի զարգացման գործոն, Երևան, «Լինուշ» հրատ., 2011, էջ 527:

3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 260:

4. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 31:

5. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևան, 1970, էջ 31:

6. Մարգարյան Ա., Հայերենի բաղիյունական բարդությունները, Երևան, 1986, էջ 16:

7. Իշխանյան Ռ., Բակունցի լեզվական արվեստը, Երևան, 1965, էջ 108:

8. Տե՛ս Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 239:

9. Նույն տեղում, էջ 448:

10. Նույն տեղում, էջ 739:

11. Նույն տեղում, էջ 257:

12. Նույն տեղում, էջ 312:

13. Մարգարյան Ա., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 225:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ (ՀԱՐԱՂՐԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

ՌԵՆԱ ՄՈՎՍԵՅԱՆ

Ղարաբաղի բարբառը Արցախի՝ վաղնջական շրջաններից հայաբնակ տարածք լինելու մասին վկայող անհերքելի իրողություն է, և Ղարաբաղի բարբառի ուսուցումը այսօր ունի ռազմավարական նշանակություն:

Արցախի Հանրապետության բուհերի Բանասիրական ֆակուլտետի կրթական ծրագրերում ներառված է «Ղարաբաղի բարբառ» առարկան՝ որպես կամընտրական դասընթաց: Սույն հոդվածը կարող է ծառայել որպես դասախոսություն այդ դասընթացի և, առհասարակ, բարբառագիտական դասընթացների համար:

Գրական հայերենի բառակազմական կաղապարները կենսունակ են մաև Ղարաբաղի բարբառում, ուստի՝ բարբառի բառակազմության ուսուցումը նպատակահարմար է կատարել գրական հայերենի նույն համակարգի հետ զուգադրելու միջոցով:

РЕЗЮМЕ

ОБУЧЕНИЕ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЕ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА В ВУЗЕ (СОПОСТАВИТЕЛЬНЫЕ СЛОЖНОСТИ)

РЕНА МОВСЕСЯН

Ключевые слова: образовательная программа, факультативный курс, лекция, диалект Карабаха, система словообразования, этническая самоуверенность, стратегическое значение, сопоставительные сложности, метод сравнения.

Карабахский диалект является неоспоримым свидетельством того, что Арцах с незапамятных времен является территорией, заселенной армянами, и на сегодняшний день обучение карабахскому диалекту имеет стратегическое значение.

Предмет "Карабахский диалект" включен в образовательную программу филологического факультета вузов Республики Арцах в качестве факультативного курса. Эта статья может послужить в качестве лекции по данному предмету и в целом по курсу диалектологии.

Словообразовательные модели литературного армянского языка продуктивны также в карабахском диалекте, следовательно, обучение словообразованию в диалекте целесообразно проводить с помощью сопоставления с той же системой литературного армянского языка.

SUMMARY

TEACHING OF THE WORD-FORMATION SYSTEM OF THE KARABAKH DIALECT IN THE UNIVERSITY (COMPARATIVE COMPLICATIONS)

RENA MOVSESYAN

Key words: *educational program, out of class activities, lecture, Karabakh dialect, word formation system, ethnic self-confidence, strategic significance, comparative complexities, method of comparison.*

The Karabakh dialect is indisputable evidence that Artsakh has been a territory inhabited by Armenians since ancient times and today the teaching of the Karabakh dialect is of strategic importance.

The subject "Karabakh dialect" is included in the educational program of the Philological faculty of the higher educational institutions of the Artsakh Republic as an elective course. This article can serve as a lecture for this subject and, in general, for the course of dialectology.

The word-forming models of the literary Armenian language are also viable in the Karabakh dialect, therefore, it is expedient to teach the word-formation in the dialect by means of comparison with the same system of literary Armenian.